XVII ԴԱՐՈՒՄ ԻՐԱՆԱՀԱՅ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԴԵՐԸ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՐՑԵՐՈՒՄ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Բանալի բառեր՝ *Նոր Ջուղա, առևտուր, շահ Աբբաս Ա, հայ առևտրական բուրժուազիա, Հայաստան, Իրան, կաթողիկոս, գրատպություն, Էջմիածին:*

Հայ ժողովուրդը դարեր շարունակ բռնի հարկադրանքի ճնշման տակ կամ կամովին, օտար նվաճողների ավերիչ ասպատակությունների, Հայաստանում խաղաղ աշխատանքի պայմաններ չլինելու, կյանքի և գույքի անապահովության երաշխիքների բացակայության և այլ պատճառներով հարկադրված է եղել պարբերաբար գաղթել հայրենիքից և հանգրվան գտնել օտար երկնակամարների տակ:

XVII դարը ևս հայության համար սկսվեց ողբերգական իրադարձություններով: Իրանի տիրակալ շահ Աբբաս Ա-ը (1587-1629 թթ.) իրանա-թուրքական հերթական պատերազմի ժամանակ Արևելյան Հայաստանից, մասամբ նաև Արևմտյան Հայաստանի շրջաններից հարյուր հազարավոր հայերի բռնի տարագրեց Իրան, ամբողջովին հայաթափ անելով Արաքսից հյուսիս ընկած հայկական տարածքները[1]: Այդ իրադարձությունը, որը պատմության մեջ է մտել «մեծ սուրգուն» («մեծ գաղթ») անունով, իր թափով ու ընդգրկման ծավալով նախադեպը չունեցող մի իրադարձություն էր, որը կոչել են «նոր ժամանակների ժողովուրդների գաղթ»: Այն իր անջնջելի դրոշմն է թողել հայ ժողովրդի հետագա ճակատագրի վրա: Հայության բնօրրանի մարդաթափ լինելն ու

[1] **Դավրիժեցի** 1884, 35-41:

ամայացումը, որին հետևեց վաչկատուն քոչվորական ցեղերի զանգվածային ներխուժումն ու հաստատումը հայկական տարածքներում ունեցավ այն հետևանքը, որ երկիրը ենթարկվեց նոմադականացման՝ նրա կենսունակությանը հասցնելով մեծագույն հարված: Տևական ժամանակի ընթացքում արհեստականորեն կասեցվեց Հայաստանի արևելյան հատվածի բնականոն զարգացման ընթացքը:

Նման պայմաններում հայ ժողովրդի տարաբնույթ խավերը՝ սկսած շինականներից ու արհեստավորներից, վաճառականներից ու ամեն տեսակի գործարար տարրերից մինչև գործունեության եռանդ կուտակած մտավորականությունը, այսուհետև իրենց գոյությունը ստիպված էին շարունակել և գործունեության ասպարեզ դարձնել իրանական գաղթաշխարհը, որտեղ առկա էին ապրելու և իրենց ստեղծագործական ներուժը գործի դնելու հարաբերականորեն բարենպաստ պայմաններ:

Հետևաբար XVII դարը հայոց պատմության մեջ դիտարկվելու է ոչ միայն որպես մեծ գաղթի ու տարագրության, քաղաքական աղետալի անցքերի ու ազգակործան ցնցումների դար, այլև հայոց վերընձյուղման, տնտեսական ու մշակութային կյանքի աշխուժացման, հարաբերական վերանորոգման ու վերակենդանացման դարաշրջան:

Հիրավի, դա մի դարաշրջան էր, երբ բուն Հայաստանում տիրապետող համատարած ավերի, տնտեսական քայքայման, մտավոր աղքատացման պայմաններում հայ գաղթօջախները և նրանց մեջ առաջին հերթին Նոր Ջուղան դարձան տնտեսական ծաղկման և մտավոր վերածնության կղզյակներ:

Առհասարակ, տարբեր ժամանակներում, աշխարհի տարբեր երկրներում ստեղծված հայկական գաղութներն ու գաղթօջախները, որոնք անկասկած հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասն են կազմում, դարեր շարունակ

անմիջական ազդեցություն են ունեցել բուն Հայաստանի կյանքի վրա: «Հայոց ժամանակակից պատմության ամենախոշոր, ամեն ինչ վճռող և բացատրող հատկությունն այն է, - գրում է Լեոն, - որ նա կազմվում է հայ գաղութների հզոր ազդեցության տակ, համարյա նրանց ձեռքով միայն: Բուն Հայաստանն ապրել է սկսում իր գաղութներում ստացած գաղափարներով, ցուցումներով, ներշնչված շարժումներով... Հասկանալ և բացատրել այն ամենը, ինչ XIX-XX դարերում կատարվեց բուն Հայաստանում այնպիսի արագահոս ուժգնությամբ, որպիսին չի տեսել հայոց պատմությունն իր առաջին օրերից, երբեք չի կարելի, եթե նրանից անջատենք գաղութները: Այս բոլորովին անհնարին է, որովհետև ժամանակակից պատմության ընթացքում գաղութների և մայր երկրի կյանքը միախառնված, ամբողջացած է և անկարելի է բաժանարար գծեր դնել երկու կողմերի մեջ»[2]:

XVII դարը հայոց պատմության մեջ բնութագրվում է նաև որպես բուրժուական արտադրահարաբերությունների սաղմնավորման կամ, որ միևնույնն է, կապիտալի նախասկզբնական կուտակման շրջան: Հայ իրականության մեջ այդ գործընթացը, իբրև կանոն, տեղի էր ունենում ամենից առաջ առևտրական կապիտալի ձևով: Հայ առևտրական բուրժուազիայի ծագումնաբանության ու ձևավորման խընդրին անդրադառնալիս հարկ է ընդգծել, որ XVII դարի սկզբից առավելապես վերևում նկարագրված իրադարձությունների, կամ բուն Հայաստանում պատմական աննպաստ պայմանների պատճառով այդ դասը կազմավորվել է և ստիպված է եղել գործել ոչ թե բուն Հայաստանում, այլ հայրենի բնաշխարհից դուրս, հայ գաղութներում և առաջին հերթին Իրանի մայրաքաղաք Սպահանի մոտ ձևավորված Նոր Ջուղայի գաղթօջախում[3], որը և հայ իրականության մեջ

---

[2] **Լեո** 1984, 73:

[3] **Տէր-Յովհաննեանց** 1880: **Բայբուրդյան Վ.** 2007:

հանդիսացավ կապիտալի նախասկզբնական կուտակման կենտրոն, ծնունդ տալով հայ դրամատիրական դասի ձևավորմանը: Հետևաբար XVII դարի հայ «առևտրական բուրժուազիա» և «առևտրական կապիտալ» ասելով ամենից առաջ պետք է նկատի ունենալ Նոր Ջուղայի կամ ջուղահայ առևտրականներին և նրանց կապիտալը[4]: Հիրավի, ողջ XVII դարի ընթացքում Նոր Ջուղան դառնում է «գաղութային հայ կապիտալի ամենամեծ ու ամենաուժեղ կենտրոնը»[5]:

Հայ առևտրական բուրժուազիայի կամ «խոջայական կապիտալի» ներկայացուցիչների հուժկու մուտքը համաշխարհային շուկա, երբ նա սկսեց հանդես գալ որպես կարևոր գործոն միջազգային ապրանքափոխանակության մեջ և Արևելքը Արևմուտքի հետ տնտեսական կապերով շաղկապելու կարևոր դերակատար, զարմացրել է ժամանակակիցներին:

Արտահայտելով այդ տրամադրությունները, գերմանացի փիլիսոփա Կանտը գրել է. «Մեկ այլ քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մոտ տիրապետում է ինչ-որ առանձնահատուկ բնույթի առևտրական ոգի: Նրանք զբաղվում են փոխանակությամբ, հետիոտն ճանապարհորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվինեական ափի Կորսո հրվանդանը: Դա վկայում է այդ խելամիտ ու աշխատասեր ժողովրդի առանձնահատուկ ծագման մասին, որը հյուսիս-արևելքից հարավ-արևմուտքի ուղղությամբ կտրում անցնում է համարյա ողջ հին աշխարհը և կարողանում է սիրալիր ընդունելություն գտնել այն բոլոր ժողովուրդների կողմից, որոնց մոտ լինում է այցելությամբ»[6]:

Անդրադառնալով այդ նույն հարցին՝ անվանի պատմաբան Ն. Ադոնցը նկատում է. «Հայերի գործունեության

---

[4] **Միրզոյան** 1983, 63:

[5] **Լեո** 1934: **Байбуртян В.** 1969. **Բայբուրդյան Վ.** 1996: **Baibourtian V.** 2004.

[6] **Кант** 1966, 572-573.

այդ կողմը սերտորեն կապված է համաշխարհային կարևորություն ունեցող խնդիրների հետ: Համաշխարհային շուկայում հայերի հայտնվելը ժամանակակից քաղաքակրթության հիմքում ընկած նոր ոգու դժվարին փորձությունն է, որը մատնանշում է Հայաստանի կարևորությունը որպես նոր աշխարհի առաջացման գործոն՝ արտացոլված Արևելքի ու Արևմուտքի փոխադարձ հարաբերություններում»[7]:

Արդարև, իրանական, հատկապես Նոր Ջուղայի վաճառականությունը կարողացավ ստեղծել նոր պատմության ժամանակաշրջանի ամենանշանավոր առևտրական համաշխարհային ցանցերից մեկը[8]: Միաժամանակ նրանք կապող օղակ էին հանդիսանում աշխարհի տարբեր ծագերում ցրված հայ գաղթօջախների միջև:

Անկասկած առևտրական կապիտալի երևան գալը զգալիորեն նպաստեց հայ իրականության մեջ հասարակական կյանքի առաջընթացին, որոշակի աշխուժություն մտցրեց հասարակական մտքի մեջ, նպաստեց բուրժուական մտածողության սաղմնավորմանը: Դրանով պետք է բացատրել պատմական այն իրողությունը, որ XVII դարի կեսերին արթնանում է հայ ժողովրդի ինքնագիտակցությունը, իսկ նրա առաջավոր զավակները սկսում են ուղիներ որոնել օտարի լուծը թոթափելու, ինքնուրույն պետականություն հաստատելու համար[9]: Սակայն Հայաստանի զույգ հատվածներում տիրող աղետալի վիճակի, քաղաքական և տնտեսական մասնատվածության, պատերազմների, գերեվարությունների և այլ պատճառների հետևանքով իրական հնարավորություններ գոյություն չունեին նրա վրա ծանրացած բռնատիրական լուծը թոթափելու և ազատություն ձեռք բերելու համար: Միանգամայն բնական է, որ հայրենի բնօր-

---

[7] **Адонц** 1984, 48.
[8] **Aslanian** 2011; **Carswell** 1968, 94.
[9] **Միրզոյան** 2001, 94:

ռանում տիրող նման վիճակը չէր կարող առաջ չբերել ազատագրական բաղձանքներ: Իսկ առկա՞ էին արդյոք ուժեր, որոնք ընդունակ էին ուղղություն և ընթացք տալու այդ բաղձանքներին, դրանք կյանքի կոչելու համար: Հայ ազգային եկեղեցին, որը պետականությունից զուրկ ժողովրդի հանգամանքներում միակ ազգային-պետական հաստատությունն էր և ստանձնել էր ազգի բնական առաջնորդի դերը, ի վիճակի չէր ազգային հավաքականության անունից հանդես գալու որպես ղեկավար ուժ՝ հակադրվելու համար օտար տիրապետողներին, մանավանդ որ այդ շրջանում խաթարվել էր հայ ազգային-եկեղեցական կազմակերպության միասնությունը: Նման պայմաններում հրապարակի վրա եղած միակ ուժը, որն ի վիճակի էր իր վրա վերցնել նման առաքելություն դա բուրժուականացող հայ առևտրային դասն էր, որը Հայաստանում պատմական աննպաստ պայմանների պատճառով ստիպված էր գործել հայրենիքից դուրս, հատկապես Իրանի գաղթօջախում: Հայ ազատագրական միտքը ամենից առաջ ծնունդ է առել հենց այդ գաղթօջախի առևտրական բուժուազիայի շրջանում: Այդ դասն է, որ աստիճանաբար համակվելով հայ բնաշխարհն ազատագրելու տրամադրություններով, սկսում է նաև տոն տալ այդ նպատակով ձեռնարկվող քայլերին: Խոջայական կապիտալը ներկայացնող այդ դասը, որքան հարստանում և ձեռք էր բերում նյութական ուժ, այնքան ավելի ցայտուն էին դրսևորվում օտար լծից ազատագրվելու նրա տրամադրությունները: Գնալով աստիճանաբար վերելք էր ապրում նրա հետաքրքրությունը սեփական ժողովրդի քաղաքական կյանքի ու նրա իրավազուրկ վիճակի նկատմամբ, ուստի նա եռանդուն կերպով լծվում էր նրա ազատագրության գործը առաջ մղելուն:

XVII դարում նախորդ հարյուրամյակի համեմատությամբ ավելի հետևողականորեն էր արծարծվում Արևմուտքի

քրիստոնյա պետությունների օգնությամբ Հայաստանն ազատագրելու գաղափարը[10]: Իրանահայ խոջայական դասը ոչ միայն անմիջապես ներգրավվում է այդ շարժման մեջ, ուղղություն տալիս նրան, այլև անմիջական մասնակցություն ցուցաբերում այդ ուղղությամբ ձեռնարկվող բանավարություններին: Հայտնի է, օրինակ, որ XVII դարի հենց սկզբին Էջմիածնի Մելիքսեթ կաթողիկոսը Նոր Ջուղայի վաճառականության ներշնչումով Հովհաննես Տերզնցու միջոցով Հռոմ է ուղարկում հպատակության թուղթ, որտեղ անդրադարձ է կատարվում նաև հայ ժողովրդի «բազմադիմի տառապանքներին»[11]:

Նման փաստերը համոզիչ կերպով գալիս են հերքելու պատմական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ հայ առևտրական կապիտալի առաջամարտիկը հանդիսացող Նոր Ջուղայի խոջայությունը հայ ժողովրդի քաղաքական շահագրգռություններից հեռու կանգնած, ապաքաղաքական հակումներ ունեցող, կրավորական վարքագծի տեր զանգված էր: Նույնիսկ հայ ազատագրական մտքի փայլուն ուսումնասիրության հեղինակ Աշոտ Հովհաննիսյանը, երբեմն իր տեսադաշտից դուրս թողնելով մի շարք իրողություններ, կամ տուրք տալով մարքսիստական փիլիսոփայության սկզբունքներին, հայ առևտրական բուժուազիայի ընդհանուր մտայնության ցուցանիշ է համարում քաղաքական կոնֆորմիզմը, «գլխապահությունը», «քաղաքական բարեհոգությունն ու քաղաքական օրինապաշտությունը» գտնելով, որ առևտրական բուրժուազիայի դասը «ավելի շատ բռնում էր տիրողների նկատմամբ խոնարհ համակերպության ճանապարհը, քան ճակատ էր տալիս իր ժողովրդի ազատագրման համար»[12]: «Երկյուղած ու տիրապաշտ՝ գաղ-

---

[10] **Հովհաննիսյան** 1959:

[11] «**Հանդէս ամսօրեայ**», 1934, 238:

[12] **Հովհաննիսյան** 1959, 458-459:

թավայրերի մեծափարթամ խոջաները, - գրում է մեծանուն գիտնականը, - չհամակվեցին հայ բնաշխարհի ազատագրական տրամադրություններով: Առևտրական նրանց հաշվեկշիռը չէր համատեղվում մայր երկրում արծարծվող ազատագրական ակնկալությունների հետ»[13]: «Քաղքենի արտոնված մի դաս էր այդ, - շարունակում է նա զարգացնել իր տեսակետը, - որի հասարակական մորալը որոշվում էր համրիչի ցուցանիշներով, մարդիկ, որոնք, գլուխ խոնարհելով տիրողների առաջ, ջանում էին ճանապարհ հարթել դեպի իրենց բարեկեցությունը, անտարբեր դեպի ազգակիցների չարքաշ ու նեղ օրը: Այս կարգի առևտրականները լիակատար հիմք ունեին խուսափելու ազգային քաղաքականության ստորջրյա ժայռերից և պահանջված դեպքում փողի օգնությամբ նվաճել անձնական հարստություն»[14]:

Իրանահայ խոջայության ազգային-քաղաքական անգործունեությունն ու կրավորականությունը ցույց տալու նպատակով պատմական գրականության մեջ վկայակոչվել է XVII դարի հայագետ Յոհաննես Շրյոդերի (Սկրոդեր) «Արամեան լեզուին գանձ» աշխատության մեջ բերված եվրոպացի ոմն Ֆրանչեսկոյի և Նոր Ջուղայից առևտրական գործերով Ամստերդամ ժամանած խոջա Սաֆարի երկխոսությունը, որտեղ եվրոպացին շոշափում է նաև հայ ժողովրդի քաղաքական դրության հարցը: Սակայն ինչպես երևում է երկխոսությունից, զգույշ և հաշվենկատ խոջան օտար տիրապետության հպատակ լինելու պատճառով խուսափել է այդ նյութից, նույնիսկ հայտարարելով, որ հայերը քաղաքական հարց չունեն: «Ուղղորդ այ, - ասում է նա, - մեր ազգն էսօր էլ դինջ այ քանց մեր թագաւորաց վախտին,

---

[13] **Նույն տեղում**, 456:
[14] **Նույն տեղում**, 458:

զարա կռիւ չի գնալ, ու ամէն ազգի հետ ազատ ելումուտ ունի»[15]:

Լեոն խոջայի արտահայտած այդ միտքը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Հային հարկավոր էլ չէ սեփական թագավոր. եթե ունենա այդպիսի բան, պիտի պատերազմի գնա, մինչդեռ այժմ նա կռվի չի գնում և ազատ առևտուր է անում բոլոր ազգերի հետ»[16]:

Հավանաբար XVII-XVIII դարերում հայ առևտրավաշխառուական շրջաններում նման մտայնությունը ունեցել է բավականին կողմնակիցներ: Արտահայտելով նրանց տրամադրությունները հոգևորականներից մեկը՝ Գևորգ Մխլեյիմյանը (Մխլեյիմյան Գևորգ վարդապետ, 1681-1758 թթ.) գրում է. «Արևելեան քրիստոնեայք թեպետ առանց թագաւորութեան են, սակայն առաւել երջանկութիւն և անդորրութիւն ունին, քան զնոսա, որք ընդ թագաւորութեամբ են»[17]:

Փաստերի ուսումնասիրությունը աներկբայորեն բերում է այն եզրակացության, որ նման տեսակետները ընդհանրական չէին հայ առևտրական բուրժուազիայի մեծ մասի համար: Ինչ վերաբերում է խոջա Սաֆարի արտահայտած մտքերին, ապա նախ դրանք կարող էին լինել անհատի մասնավոր տեսակետ, իսկ ամենակարևորը զգուշության դրսևորում Սեֆյան պետության նկատմամբ իրենց քաղաքական լոյալությունը կասկածի տակ չդնելու համար: Ի վերջո չպետք է մոռանալ, որ իրանահայ վաճառականությունը և մեծատունները, թեև օգտվում էին Սեֆյան շահերի և առհասարակ հյուրընկալ երկրի բարյացակամ վերաբերմունքից, նրանց կողմից իրենց շնորհված իրավունքներից և արտոնություններից, սակայն միևնույն ժամանակ իրենք ևս

---

[15] **Joh. Joacim Schröderus**, Thesaurus, 1710, 338-339.

[16] «**Արարատ**», 1871, 129-139:

[17] **Լեո** 1934, 102:

բռնատիրական վարչակարգի կողմից ենթակա էին ազգային ու կրոնական ճնշման:

Նման բնույթի հալածանքները նույնիսկ «քրիստոնեաների» համբավ վայելող շահ Աբբաս Ա-ի ժամանակ սովորական երևույթ էին, որի պատճառով և Առաքել Դավրիժեցին նրան անվանում է «վիշապ անդնդային»[18]: Այդ բռնակալը իր կողմից գաղթեցված հայ բնակչությանը տնտեսական ու քաղաքական նպատակներով սիրաշահելու հետ մեկտեղ, ժամանակ առ ժամանակ նրանց նկատմամբ վարում էր զանգվածային հետապնդումների և իսլամը պարտադրելու քաղաքականություն[19]: Ուստի խոջայական դասը ստիպված էր միշտ զգույշ և աչալուրջ լինել և մշտապես Սեֆյան իշխանությունների առջև ներկայանալ որպես բարեհույս և չեզոք տարր: Այդ բանը նկատելի էր նույնիսկ կողմնակի դիտորդների համար: Ֆրանսիացի Շարդենը, օրինակ, վկայում է, որ Նոր Ջուղայի խոջաները, որոնք իրազեկ էին Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի բանակցություններին Հռոմի հետ քրիստոնյա պետությունների օգնությամբ Հայաստանի ազատագրման վերաբերյալ, երկյուղի մեջ էին, թե իրանական պետությունը կարող դրա համար վրեժխնդիր լինել և պատժել հայերին[20]:

Հայության քաղաքականապես ամենահասուն և ամենագործուն դասը՝ առևտրական բուրժուազիան, ականատեսն ու վկան լինելով տնտեսական ու բարոյական անտանելի միջավայրում տառապող սեփական ժողովրդի դժգույն ճակատագրին, սկսում է հստակորեն գիտակցել նաև, որ հայ ժողովրդի թշվառությունը հետևանք է սեփական պետականության բացակայության:

---

[18] **Դավրիժեցի** 1884, 148-162:
[19] **Նույն տեղում**:
[20] **Chardin** 1735, 146-147.

Քաղաքական այդ տրամադրությունները հատկապես ցայտուն կերպով դրսևորվեցին XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին, երբ աննախընթաց կերպով սաստկացել էին Սեֆյան Իրանի կառավարող շրջանների ճնշումները ոչ միայն հայ լայն զանգվածների, այլև առևտրական-խոջայական դասի նկատմամբ: Այդ իրավիճակը իր ցայտուն արտահայտությունն է գտել Նոր Ջուղայում հանդես եկած մատենագիր ու տաղասաց Ստեփանոս Դաշտեցու մոտ[21], որը երազում էր հայ ժողովրդի փրկության և նրա համար մի այնպիսի վիճակի ստեղծման մասին, որն անհամատեղելի լիներ «իրանական և օսմանյան բռնատիրության հետ»[22]:

Հայ ժողովրդի քաղաքական ազատության ձեռքբերման գաղափարը միակը չէր, որ ոգեշնչում էր առևտրական բուրժուազիային: Նա սկսում է մեծ ազդեցություն ու կշիռ ձեռք բերել նաև համազգային նշանակություն ունեցող համարյա բոլոր հարցերում: Ըստ էության նա իր ձեռքն է վերցնում հայ ազգային կյանքի ղեկավարությունը ոչ միայն Իրանի գաղթօջախի, այլ համայն հայության կյանքի շրջանակներում: Համահայկական նշանակության բազմաթիվ հարցեր լուծվում էին նրա գիտությամբ ու միջոցով: Առանց նրա համաձայնության չէր կարող վճռվել ոչ մի նշանավոր ազգային գործ: «Էջմիածինը ենթարկվում էր նրան, կաթողիկոսի ընտրության գործում առաջին ձայնը պատկանում էր Ջուղային»[23]: XVII-XVIII դարերում հայոց կաթողիկոսներից Մովսես Տաթևացին, Փիլիպոս Աղբակեցին, Հակոբ Ջուղայեցին, Նահապետ Եդեսացին, Ստեփանոս Ջուղայեցին, Աղեքսանդր Ջուղայեցին և Աստուածատուր Համադանցին բազմել էին կաթողիկոսական գահին ջուղայեցի խոջաների

---

[21] **Մ. Մաշտոցի անվան Մատենադարան**, ձեռ. թիվ 781, էջ 2-3:

[22] **Հովհաննիսյան** 1959, 463:

[23] **Լեո**, Հայկական տպագրություն, Երկերի ժողովածու, հ. 5, 194:

աջակցությամբ[24]: Նրանք էին կաթողիկոսության թեկնածուների համար Սեֆյան շահերից ձեռք բերում հրովարտակ կամ համաձայնություն իրենց բարձր պաշտոնը ստանձնելու համար: Սեֆյան պետության մեջ ընդունված կարգ էր, որ կաթողիկոսության իրավունքի կամ հոգևոր այլ պաշտոններում հաստատվելու համար պարտադիր կարգով անհրաժեշտ էր ձեռք բերել կառավարության թույլտվությունը՝ ռաղամը: Այդ գործը սովորաբար գլուխ էին բերում խոջայական դասի ազդեցիկ ներկայացուցիչները, որոնք Առաքել Դավրիժեցու հաղորդմամբ «Յոյժ ընդունելիք էին խօջայ Սաֆարս եղբայրն իւր խօջայ Նազարն առաջի Պարսից թագաւորին և իշխանացն նորա»[25]: Հայտնի է, օրինակ, որ 1680 թ. Հակոբ Ջուղայեցու մահվանից հետո Էջմիածնի հոգևորականները կաթողիկոս էին ձեռնադրել Երուսաղեմի հայոց պատրիարք Եղիազար Այնթափցուն, որը մինչ այդ ինքնագլուխ իրեն հռչակել էր հակաթոռ կաթողիկոս: Սակայն քաջ գիտակցելով, որ կաթողիկոսի ընտրության հարցում վերջին խոսքը պատկանում է ջուղայեցիներին, Այնթափցին չէր մեկնում իր պաշտոնավայրը ասելով, թե «ոչ եկից ի սուրբ Աթոռն մինչև ոչ գայցե մանսար Իսպահանու»[26]:

XVII դարի կեսերին Հայաստանում երկար տարիներ քարոզչական գործունեություն ծավալած կաթոլիկ միսիոներ Փիրոմալլին գրում էր, որ «ջուղայեցիներն ի վիճակի են ըստ իրենց ցանկության պաշտոնազրկել որևէ վարդապետի, եպիսկոպոսի և նույնիսկ կաթողիկոսի»:

Ջուղայեցի խոջա Նազարի ջանքերի շնորհիվ 1629 թ. շահ Սեֆին հրապարակեց հրովարտակ Էջմիածինը տարեկան հարյուր թուման «փիշքաշի» (նվիրատվության - Վ. Բ.) պարտավորությունից («մուղադա») ազատվելու մասին, որի

---

[24] **Chougassian** 1998.

[25] **Դավրիժեցի** 1884, 186:

[26] **Երևանցի** 1873, 104, 211:

վճարումը 1617 թ. պարտադրվել էր Մելիքսեթ կաթողիկոսին շահ Աբբաս Ա-ի կողմից[27]:

Հայ առևտրական բուրժուազիան մշտապես աշխատել է զորավիգ կանգնել Էջմիածնին ու հայ Առաքելական եկեղեցուն, գիտակցելով նրա համահայկական ընդգրկումն ու միավորիչ դերը: Նկատի ունենալով, որ XVII դարի երկրորդ տասնամյակից սկսած Էջմիածինը վերածվում էր ազգային-ազատագրական գաղափարների կենտրոնի, հայ առևտրական դասը անմիջապես նեցուկ դարձավ նրա այդ ձգտումներին՝ միաժամանակ հաստատուն կերպով կանգնելով հայոց ազգային եկեղեցու ինքնուրույնության, նրա դավանանքի ու հնամենի ավանդույթների պաշտպանության դիրքերում:

Կարևոր է նաև շեշտել, որ եթե եկեղեցականներն առաջվա պես հայ ժողովրդի ազատագրումը շարունակում էին ակնկալել Հռոմի աթոռից կամ Արևմուտքի քրիստոնյա պետություններից, ապա իրանահայ առևտրական դասը մերժում էր «ֆրանկների միջոցով ազատագրվելու խաբուսիկ ցնորքը»: Այդ մասին մենք բազմաթիվ փաստեր ենք գտնում ստվարածավալ «Քարմելյանների տարեգրությունում»[28]: Կան այդ հանգամանքը հաստատող բազմաթիվ այլ տվյալներ ևս: Այսպես, երբ 1613 թ. Մելիքսեթ կաթողիկոսը, առանց Նոր Ջուղայի խոջաների համաձայնության պաշտոնական նամակ է ուղարկում Հռոմ, որտեղ պատրաստակամություն էր հայտնում ընդունելու Հռոմի պապի գերագահությունը, խոջաները անմիջապես համոզում են Աբբաս Ա-ին ձերբակալել կաթողկոսին և չեղյալ հայտարարել շահի որոշումը[29]: Այնուհետև, 1607 թ. շահ Աբբաս Ա-ը հրաման է արձակում Էջմիածնի եկեղեցին քանդելու և նրա քարերն ու

---

[27] **Դավրիժեցի** 1884, 232:

[28] **A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII Centuries.**

[29] **Գալեմքարեան** 1915, 44:

սրբազան մասունքները իր մայրաքաղաք Սպահան տեղափոխելու վերաբերյալ, որպեսզի այնտեղ կառուցվի «նոր Էջմիածին» գաղթեցված հայ բնակչությանը ընդմիշտ Իրանի հետ կապելու համար: Ընդ որում, շահը իր այդ որոշումը կայացրել էր Սպահանում գտնվող կաթոլիկ միսիոներների հրահրմամբ, որոնք հույս ունեին այդ ճանապարհով հարված հասցնել հայ ազգային եկեղեցու հիմքերին, միաժամանակ հեշտացնելով «անհավատներին» դարձի բերելու գործը: Դարձյալ խոջաների ջանքերի շնորհիվ խափանվում է հայ Առաքելական եկեղեցու դեմ ուղղված այդ սքողված ու վտանգավոր դավը[30]:

Առհասարակ եվրոպական տարբեր պետությունների շահերն արտահայտող Կապուչինյան, Ֆրանցիսկանյան, Քարմելյան, Դոմինիկյան, Օգոստինյան, Ճիզվիթական և այլ կրոնական միաբանություններին պատկանող միսիոներները, քաջ գիտակցելով Նոր Ջուղայի և նրա առևտրական բուրժուազիայի կշիռը համահայկական գործերում, եռանդուն կերպով աշխատում էին նրանց մտցնել կաթողիկե եկեղեցու ծոցը: Այդ գործում նրանց աջակցում էր գաղթօջախի կաթոլիկ համայնքը Շահրիմանյան ընտանիքի գլխավորությամբ: Միսիոներները իրենց այդ քարոզչական գործունեությանը տալիս էին քաղաքական երանգ, զարգացնելով այն տեսակետը, որ իբր հայ ժողովուրդը կորցրել է իր քաղաքական ազատությունը հռոմեական եկեղեցու «Սուրբ գրքից» հեռանալու պատճառով և որ իր կորցրածը վերագտնելու համար նա պետք է կրկին վերադառնա «Ճշմարիտ հավատը» ներկայացնող հռոմեական եկեղեցու գիրկը:

XVII-XVIII դարերի հայ իրականության մեջ հակակաթոլիկական կամ հակամիարարական պայքարի գաղափարական կենտրոնը և դրոշակակիրը հանդիսանում էր Նոր

---

[30] **Տէր Յովհաննեանց** 1880, 51-56:

Ջուղան[31]: Այստեղ այդ պայքարի հիմնական կազմակերպիչը հայ հոգևորականությունն էր և նրան գաղտնի ու բացահայտ աջակցություն ցույց տվող խոջայական դասը: Նոր Ջուղայի վաճառականության այն խմբավորումը, որը հավատարիմ մնաց հայ Առաքելական եկեղեցու դավանանքին ու նրա սկզբունքներին, վճռական պայքար ծավալեց Իրանում կաթոլիկ միսիաների գործունեության դեմ: Իրենց այդ պայքարով նրանք պաշտպանում էին հայոց եկեղեցու ու դավանանքի, հետևաբար և հայ ժողովրդի ինքնուրույն գոյության իրավունքը[32]:

Չափազանց մեծ էր նաև իրանահայ բուրժուազիայի դերը հայ հոգևոր զարթոնքի գործում: XVII դարի սկզբից մինչև պատմության նոր դարաշրջանի արշալույսը հայ առևտրական բուրժուազիայի խոշորագույն կենտրոնը՝ Նոր Ջուղան եղել է համայն հայության կյանքի ուղենիշ աստղը, նրա տնտեսական, քաղաքական, գաղափարական, գիտական ու մշակութային կյանքի ամենանշանավոր կենտրոնը: Նա է տոն ու ընթացք տվել համահայկական տարողություն ունեցող գրեթե բոլոր երևույթներին, նպաստել հայության շրջանում նոր որակներ յուրացնելու, եվրոպական և ասիական քաղաքակրթությունների լավագույն ձեռքբերումների տարածմանը: Այն առանձնահատուկ տեղ է գրավում նաև հայ ժողովրդի քաղաքական ինքնագիտակցության ձևավորման գործում:

XVII-XVIII դարերի ընթացքում իրանահայ առևտրական բուրժուազիան էր ուղղություն տալիս Հայաստանի հասարակական, քաղաքական, գաղափարական և գիտամշակութային կյանքին: Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքին կից հիմնվում է դպրոց կամ ինչպես այն ժամանակ էին կոչել՝ համալսարան, ուր դասավանդում էին բազմաթիվ առարկա-

---

[31] **Միրզոյան** 2001, 11:

[32] **Բայբուրդյան Ա.** 1988: **Բայբուրդյան Վ.** 1989:

ներ, այդ թվում նաև եվրոպական և ասիական լեզուներ: Այդ դպրոցում ուսանել են բազմաթիվ նշանավոր գործիչներ, որոնք կարևոր դեր են խաղացել համայն հայության լուսավորական և մշակութային կյանքում: Նոր Ջուղան հանդիսացել է հայ գիտական մտքի աչքի ընկնող կենտրոններից մեկը: Այստեղ ապրել և ստեղծագործել են գիտության տարբեր բնագավառների գործիչներ: Հատկապես ծաղկում է ապրել հայ պատմագիտական և փիլիսոփայական միտքը: Այդ բնագավառում հայտնի դեմքերից են Խաչատուր Ջուղայեցին, Սիմեոն Ջուղայեցին, Հովհաննես Մրքուզը և ուրիշներ: Սիմեոն Ջուղայեցու թողած փիլիսոփայական ժառանգությունը դուրս է գալիս ազգային շրջանակներից: Առաքել Դավրիժեցին վկայում է, որ ջուղայեցի ազդեցիկ դեմքերից մեկը՝ խոջա Սաֆարը «էր աւագ ոչ միայն ջուղայեցւոց, այլ և ամենայն ազգին հայոց՝ որք կային ի ներքոյ թագաւորութեանն պարսից»: Արդարև, շնորհիվ իրանահայ բուրժուազիայի գործունեության, Նոր Ջուղայի հասարակական-մշակութային կյանքը դուրս գալով համայնքային նեղ շրջագծից, ձեռք բերեց ազգային բովանդակություն և նկարագիր: Անժխտելի է իրանահայ առևտրական բուրժուազիայի խաղացած հսկայական դերը նաև եվրոպական և ասիական մշակույթների մերձեցման և քաղաքակրթությունների շփման գործում: Նրանք Եվրոպայից Արևելք էին բերում ոչ միայն բազմապիսի ապրանքներ, այլև նոր ու թարմ գաղափարներ: «Հայը կայաններ ուներ Եվրոպայի և Ասիայի ամենանշանավոր կենտրոններում. այդ կայանները միայն վաճառականական շահին չէին ծառայում, այլև երբեմն մտավոր գործի օջախներ էին հանդիսանում», - գրում է Լեոն[33]:

Անուրանալի է նաև հայ առևտրական բուրժուազիայի դերը հայ գրատպության գործում: Դեռևս XVI դարի վերջե-

[33] **Լեո** 1986, 153:

ին հին ջուղայեցի վաճառականների նյութական օժանդակությամբ Մարսելում, Հովհաննես Տերզնցին հրատարակում է մի շարք գրքեր: Ավելի ուշ Նոր Ջուղայում և բողոքական Հոլանդիայում ստեղծվում է հայկական տպագրություն: Ամստերդամում, Մարսելում, Վենետիկում և եվրոպական այլ կենտրոններում XVII-XVIII դարերի ընթացքում լույս են տեսել աշխարհիկ և կրոնական բնույթի բազմաթիվ գրքեր, վաճառականական տեղեկատուներ, հաշվեմատյաններ, աշխարհագրական քարտեզներ և այլն:

Անկասկած, հայ իրականության մեջ գրատպությունը ինքնանպատակ չէր: Այն ուներ ազգային-քաղաքական երանգ և գալիս էր իր նպաստը բերելու հայ ազատագրական շարժմանը: Տպարանները ֆինանսավորող խոջաների համար գիրքը միայն վաճառքի առարկա չէր, այլ հզոր միջոց՝ հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչների փայփայած քաղաքական իղձերը կենսագործելու համար: Պատահական չէ, որ Ամստերդամում լույս է տեսնում հայ դասական պատմագրության գլուխգործոցը՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Այդ հրատարակությունների նպատակն էր հայրենասիրության ոգով կրթել ու դաստիարակել այն հայ երիտասարդներին, որոնք, ինչպես գրում էր Թովմա Վանանդեցին, «գտնվում են խավարի մեջ և ապրում են բռնակալական լծի տակ»:

Այսպիսով, ակներև է, որ XVII դարում գրատպությունը ևս արտահայտում էր հայ ժողովրդի՝ վերելք ապրող ազատագրական ձգտումները և արտացոլում օտար լուծը թոթափելու նրա քաղաքական իղձը:

XVII դարի կեսերին իրանահայ առևտրական բուրժուազիայի քաղաքական տրամադրությունների մեջ ակնառու բեկում է նկատվում: Դա պայմանավորված էր առաջին հերթին Իրանի տնտեսական և քաղաքական խորը ճգնաժամով: Այդ երկրի կառավարող շրջանները սկսում են

սահմանափակել հայ առևտրական-խոջայական դասի առևտրական ու քաղաքական իրավունքները, տնտեսական հարվածներ հասցնում նրան, ենթարկում ազգային ու կրոնական հալածանքների: Շահական կառավարության քաղաքականությունն է դառնում «ոչ թե պաշտպանել խոջայական առևտուրը, այլ հարստահարել ու կողոպտել նրան»[34]: Նոր Ջուղան վերածվում է ամեն տեսակի բռնավորների կողոպուտի ու հարստահարությունների թիրախ, որոնք բռնությունների ու տանջանքների ենթարկելով հարուստ վաճառականներին, նրանցից հափշտակում էին իրենց ունեցվածքը: Ստեփանոս Ռոշքայի վկայությամբ՝ Նոր Ջուղայի մեծահարուստ վաճառականներից մեկի՝ Մուրադ Շահրիմանյանի որդի Նազարը «...անօրեն հրամանաւ տանջեալ... ողորմեա ինձ Աստուած եւ զերից մանկանց օրինութիւնն երգելով հանգեաւ ի Քրիստոս»[35]: Եսայի կաթողիկոսը, որպես նման դեպքերի ականատես, գրում է. «Որքան դովլաթովորս և մեծանունս աչօք մերովք տեսաք ի Ջուղայ և յԵրևան, որ ի վերջին աղքատութիւնն և թշվառութիւնն հասեալ էին, և հարցեալ զպատճառս տեղեկացուք, որ վասն ուրացողացն և յափշտակութեան ընչից իւրեանց եղեալք այնպէս»[36]:

Այս բոլորը իրենց անմիջական ազդեցությունն են ունենում իրանահայ առևտրական բուրժուազիայի քաղաքական տրամադրությունների վրա: Նրա քաղաքական անբավականության զգացումը սկսում է շեշտակի վերելք ապրել, որի տրամաբանական հետևանքն է դառնում ազգային-ազատագրական պայքարի ուղիների ակտիվ որոնումները: Իրանահայ առևտրական բուրժուազիայի այդ տրամադրությունները պարարտ հող են գտնում ոչ միայն Իրանի հայ

---

[34] **Լեո** 1934, 171:

[35] **Ոսկեան** 1968, 11:

[36] **Եսայի կաթողիկոս** 1839, 19:

զանգվածների շրջանում, այլև բուն Արևելյան Հայաստանում, որտեղ տիրապետող Սեֆյան Իրանի իշխանությունների ճնշումների ուժեղացման հետևանքով բարձրանում էր ազատագրական շարժման ալիք:

Ուշագրավ է, որ իրանահայ առևտրական բուրժուազիայի քաղաքական տրամադրությունները համահունչ էին նաև արևմտահայերի շրջանում խմորվող տրամադրություններին: Արևմտահայ «առևտրական բուրժուազիան զարգացման համար կաշկանդված լինելով թուրքական տիրապետության պայմաններում, առաջ էր քաշել նոր ուղեգիծ, նպատակ ունենալով ընդմիշտ դուրս գալ օսմանյան ավատականության խեղդող մթնոլորտից և ուրիշների նման ունենալ իր շահերն ապահովող հարազատ իշխանություն: Հենարան ընտրելով կայսրության մեջ ապրող երիցս դժգոհ՝ տանջվող ու կեղեքվող հայ աշխատավորական տարրը, նա իր քաղաքական ծրագիրը հիմնում էր արևմտահայ ժողովրդի ազատագրման և Հայաստանի անկախության վերականգնման գաղափարի ու ծրագրերի վրա»[37]: «Արևմտահայ ազատագրական շարժման դրոշակակիրն, ուրեմն, - նշում է Հակոբ Անասյանը, - մեծ ուժ ներկայացնող հայ բուրժուազիայի առաջավոր թևն էր, այլ խոսքով, շարժման մղիչ ուժը՝ արևմտահայ առևտրական բուրժուազիան էր, որը մերձավորարևելյան առևտրի ընդհանուր վերելքի այս դարաշրջանում պետք է լուսավորեր ազգային զարթոնքի և ազատագրական ճիգերի ուղին Արևմտյան Հայաստանում»[38]:

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ արևմտահայ, ինչպես նաև արևելահայ (և նրա մի հատվածը կազմող իրանահայ) առևտրական բուրժուազիայի գործունեության և նրա վարքագծի միջև XVII դարում առկա են եղել սերտ աղերսներ: Հայաստանի զույգ հատվածներում էլ այդ դասը հան-

---

[37] **Անասյան** 1961, 40:

[38] **Նույն տեղում**, 41:

դես էր գալիս որպես հայ հասարակության քաղաքականապես ամենահասուն և ամենագործուն տարրը: Արևելահայ առևտրական կապիտալի ներկայացուցիչների օրինակով «արևմտահայ խոջայությունը ևս հրապարակ գալով հայրենիքի ազատության նշանաբանով, 1666 թվականից սկսած հանդուգն քայլ էր անում: Նա դիմում էր արտաքին աշխարհին, հայտնելով, որ հայերը, բախտակից ժողովուրդների հետ, պատրաստ են ոտքի կանգնելու և թոթափելու օսմանյան Թուրքիայի ծանր լուծը»[39]:

XVIII դարում Իրանում ստեղծված տնտեսական և քաղաքական անապահով պայմանների պատճառով Իրանից (հատկապես Նոր Ջուղայից) Հնդկաստան տեղափոխված խոջաները ևս բոլորանվեր նվիրվեցին Հայաստանի ազատագրության գործին[40]:

Հանրահայտ իրողություն է, որ գրեթե բոլոր նշանավոր հնդկահայ գործիչները սերում էին Նոր Ջուղայից:

1772 թ. Մադրասում հիմնադրած իր տպարանում Շահամիր Շահամիրյանը տպագրեց «Նոր տետրակ որ կոչի հորդորակ» աշխատությունը, որտեղ քննության էր ենթարկում հայոց պետականության վերականգնման հնարավոր ուղիները: Այդ աշխատությամբ Շահամիրյանը ոչ միայն փորձում էր ցույց տալ այդ մեծ նպատակի իրագործման ուղիները, այլև ուրվագծում էր իր տեսլականը ապագա Հայաստանի վերաբերյալ:

Մտահոգված լինելով սեփական ժողովրդի վերածնության խնդրով, Հնդկաստան տեղափոխված իրանահայ առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչները ձեռնամուխ էին եղել քաղաքական եռանդուն գործունեության, որն իր մակարդակով ներկայացնում էր հայկական բուրժուազիայի քաղաքական գործունեության ավելի հասուն շրջանը:

---

[39] **Նույն տեղում**, 83:
[40] **Greppin** 1978; **Seth, Armenians**, 1937; **Baiburtian A.** 2009.

Նրանց գործունեությունը հատկապես մեծ թափ ու ծավալ է ստանում այն ժամանակ, երբ XVIII դարի ընթացքում անգլիացիները Հնդկաստանում սկսում են հետևողականորեն դուրս մղել իրենց մրցակից հայկական բուրժուազիային[41]: Ելք փնտրելով այդ անբաղձալի վիճակից՝ Շահամիր Շահամիրյանը և Մադրասի հայրենասիրական խմբակի մյուս ներկայացուցիչները առաջ են քաշում Հայաստանի անկախության վերականգնման իրենց հայտնի ծրագիրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաքել Դավրիժեցի 1884, Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ, Էջմիածին:

Անասյան Հ. 1961, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան:

«**Արարատ**» ամսագիր, 1871:

Բայբուրդյան Ա. 1988, Կարմելյանների միաբանության միսիոներների գործունեությունը իրանահայության շրջանում (XVII դարում), «Լրաբեր հասարակական գիտությունների», № 11, էջ 51-61:

Բայբուրդյան Վ. 1964, Նոր Ջուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսիոներների կազմակերպությունները, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», № 9, էջ 39-52:

Բայբուրդյան Վ. 1989, XVII դարում Արևելյան Հայաստանում կաթոլիկ միսիոներների գործունեության պատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, էջ 147-157:

Բայբուրդյան Վ. 1996, Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը XVII դարում, Թեհրան:

Բայբուրդյան Վ. 2007, Նոր Ջուղա, Երևան, 152 էջ:

Գալեմքարեան Գ. 1915, Կենսագրութիւններ, Վիեննա:

Եսայի կաթողիկոս 1839, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից, Շուշի:

---

[41] **Armenian Merchants of the Seventeenth and Early Eighteenth Centuries**, 1998.

Լեո 1934, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Երևան:

Լեո 1984, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան:

Լեո 1986, Հայկական տպագրություն, երկերի ժողովածու, հ. 5, Երևան:

Հովհաննիսյան Ա. 1959, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, [Հայ ազատագրական մտքի դեգերումները 15-17-րդ դարերում: Տրորված ուղիներով: Նոր ճանապարհի վրա], 695 էջ:

«**Հանդէս ամսօրեայ**», 1934:

Միրզոյան Հ. 1983, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի վերլուծություն, Երևան:

Միրզոյան Հ. 2001, Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, Երևան:

Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. թիվ 781, էջ 2-3:

Ոսկեան Հ.Հ, Ստեփանոս Վ. Ռոշքա, Մատթէոս Վ. Ջուղայեցի, Վիեննա, 1968, 181 էջ:

Սիմեոն Երևանցի 1873, Ջամբռ, Վաղարշապատ:

Տէր-Յովհանեանց Յ. 1880, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, Նոր Ջուղա:

Адонц Н. 1984, Из истории армянского вопроса. Научно-информационный бюллетень сектора Научной информации АН Армении, серия 3, Ереван.

Байбуртян В. 1969, Армянская колония Новой Джульфы в XVII веке (Роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях), Ереван.

Кант И. 1966, Сочинения, т. 6, Москва.

Aslanian S. D. 2000, From the Indian Ocean to the Mediterranian: the Global Trade Networks of Armenian merchants from New Julfa, Berkeley.

A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII Centuries, vol. I (720 p.) - II (721-1376 pp.), London, Eyre and Spottiswoode, 1939.

Armenian Merchants of the Seventeenth and Early Eighteenth Centuries: English East India Company Sources. Sources XXXVII, edited by Vahe Baladouni, and Margaret Makepeace, Philadelphia, PA: American Philosophical Society, 1998, 294p.

Baibourtian A. 2009, The Emergence of the Armenian Diaspora and Genesis of the Indo-Amenian Community, Diaspora Studies, vol. 2, no. 1, New Delhi, pp. 93-108.

Baibourtian V. 2004, International Trade and the Armenian Merchants in the Seventeenth Century New Delhi.

Carswell J. 1968, The Armenians and the East-West Trade Through Persia in the Seventeenth Century, Oxfrord.

Chardin Jean 1811, Voyages du Chevalier Chardin, en Perse, et autres lieus de l'orient, t. II, Paris.

Chougassian V. S. 1998, The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seveteenth Century, University of Pennsilvania.

Johacim Schröderus 1710, Thesaurus linguae Armenical (Արամեան լեզուին գանձ), Amsterdam.

Seth M. J. 1937, Armenians in India from the earlies times to the Present day, Calcutta.

Վահան Բայբուրդյան - *պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ*
արևելագիտության ինստիտուտ, Իրանի բաժնի վարիչ,
գլխավոր գիտաշխատող,
V.Bayburdyan1933@gmail.com

THE LEADING ROLE OF THE IRANIAN-ARMENIAN TRADE BOURGEOISIE IN THE XVII CENTURY PAN-ARMENIAN ISSUES

Keywords: *New Julfa, trade, Shah Abbas I, Armenian trade bourgeoisie, Armenia, Iran, Catholocos, typography, Ejmiatsin.*

The XVII century is also characterized in the history of Armenia as the period of formation of the bourgeois relations or the period of initial accumulation of capital. In the Armenian reality, this process as a rule took place primarily in the form of commercial capital. When referring to the origin and formation of the Armenian commercial bourgeoisie, it should be emphasized that due to the unfavorable historical conditions in Armenia at the beginning of the XVII century this class was formed and had to operate not in

Armenia, but outside the native land, in the Armenian colonies and first of all in the community of New Julfa which had formed near Isfahan, the capital city of Iran. In the Armenian reality New Julfa became the center of the initial accumulation of capital, giving birth to the formation of the Armenian capitalist class. Therefore, by saying "commercial bourgeoisie" and "commercial capital" of the XVII century, one must first of all refer to the New Julfa or Julfa-Armenian merchants and their capital. Indeed, throughout the XVII century New Julfa became "the largest and most powerful center of colonial Armenian capital".

The Armenian commercial bourgeoisie always tried to support Ejmiatsin and the Armenian Apostolic Church, realizing its pan-Armenian reach and unifying role. Taking into account the fact that since the second decade of the XVII century Ejmiatsin was turning into a center of national liberation ideas, the Armenian merchant class immediately supported its aspirations, at the same time firmly backing the independence of the Armenian National Church, its faith and ancient traditions.

Vahan Bayburdyan - *Doctor of Sciences, Institute of Oriental Studies of NAS RA, Head of the Department of Iran, Principal Researcher,*
V.Bayburdyan1933@gmail.com